



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

02.09.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ 1051-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ Մ.
ՄԱՀՏՈՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 63 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԻ
ՊԱՏՈՒՀԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄԸ ԴՌՆՈՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ, 30-րդ, 31-րդ կետերը և 32-րդ կետի բ) ենթակետը և հաշվի առնելով Գորիս համայնքի բնակիչ Սեյրան Պողոսյանի 2024 թվականի օգոստոսի 14-ի դիմումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Մ. Մաշտոցի փողոց թիվ 63 հասցեում գտնվող սպասարկման կետի պատուհանի ինքնական ձևափոխումը դռնով, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ճանաչել օրինական /համաձայն հատակագծի/:
2. Պատուհանի ինքնական ձևափոխումն օրինականացնելու համար քաղաքացի Սեյրան Պողոսյանը Գորիսի համայնքային բյուջեի 900285125150 հաշվեհամարին պետք է վճարի 10000/տասը հազար/ ՀՀ դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ